# ԱՄԱՆՈՐԻ ԵՎ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻԻՆ

ՄՈՍԿՎԱ

Քրիստոսի Ծննդյան ավետման ուրախությամբ զեղուն ողջունում ենք Ձեզ եղբայրական ջերմ սիրով և բարեմաղթում Ձերդ Սրբության քաջառողջ երկար կյանք՝ ի պայծառություն Ռուս Պրավոսլավ Եկեղեցու և ի մխիթարություն ռուս հավատացյալ ժողովրդի՝ Հայրենիքի բարօրությամբ և առաջադիմությամբ:

Մնամք Ձերդ Սրբության աղոթակից բարի գործոց հաջողության և աշխարհի խաղաղության համար,

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

## ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔԻՍԵԴԵԿ Գ-ԻՆ

ԹԲԻԼԻՍԻ

Քրիստոսի Ծննդյան ավետման ուրախությամբ զեղուն ողջունում ենք Ձեզ եղբայրական ջերմ սիրով և բարեմաղթում Ձերդ Ս. Օծության քաջառողջ երկար կյանք՝ ի պայծառություն Վրացական Ուղղափառ Եկեղեցու և ի մխիթարություն վրաց հավատացյալ ժողովրդի՝ Հայրենիքի բարօրությամբ և առաջադիմությամբ:

Մնամք Ձերդ Ս. Օծության աղոթակից բարի գործոց հաջողության և աշխարհի խաղաղության համար,

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

## ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՋԵՈՖՐԻԻՆ

ԼՈՆԴՈՆ

Քրիստոսի Ծննդյան ավետման ուրախությամբ զեղուն ողջունում ենք Ձեզ եղբայրական ջերմ սիրով և բարեմաղթում Ձերդ Սրբության քաջառողջ երկար կյանք՝ ի պայծառություն Անգլիկան Ս. Եկեղեցու և ի մխիթարություն Անգլիայի հավատացյալ ժողովրդի:

Մնամք Ձերդ Սրբության աղոթակից բարի գործոց հաջողության և աշխարհի խաղաղության համար,

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

## ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (ԲՈՒԽԱՐԵՍՏ), ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԻԼԻՆ (ՍՈՖԻԱ), ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱՆ ԿԻՅՎԻՏԻՆ (ՏԱԼԻՆ), ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍԻՆ (ՌԻԳԱ)։

Քրիստոսի Ծննդյան ավետման ուրախությամբ գնդուն ողջունում ենք Ձեզ եղբայրական ջերմ սիրով և բարեմաղթում Ձերդ Սրբության քաջառողջ երկար կյանք՝ ի պայծառություն Ձեր Ս. Եկեղեցու և ի մխիթարություն Ձեր հավատացյալ ժողովրդի՝ Հայրենիքի բարօրությամբ և առաջադիմությամբ։

Մնամք Ձերդ Սրբության աղոթակից բարի գործոց հաջողության և աշխարհի խաղաղության համար,

Վ Ա Զ Գ Ե Ն Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## ՄՈՍԿՎԱՅԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՌՈՒԺԻՑԿՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒՉ ՊՐՈՖԵՍՈՐ ԴՈԿՏՈՒՍՈՎԻՆ

ԶԱԳՈՐՍԿ

Ի սրտե շնորհակալ եմ Ձեր շնորհավորանքի համար։ Ամանորի և Քրիստոսի Ծննդյան տոնի առթիվ ընդունեցեք Մեր հայրական օրհնությունը և լավագույն ցանկությունները Ձեր Ճեմարանի հաջողության և բարգավաճման համար։

Վ Ա Զ Գ Ե Ն Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՌ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻԻՑ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Ձերդ Ս. Օծություն, սիրեցյալ ի Տեր, Սրբազնագույն Վեհափառ։

Հոգևոր բերկրանքի զգացմունքով ողջունում եմ Ձերդ սիրեցյալ Վեհափառությանը Քրիստոսի Ծննդյան քրիստոնեական մեծ տոնի առթիվ։

Հաղորդակից արեք ինձ Ձեր ուրախությանն ի Քրիստոս, որն Իր Ծննդյամբ բերեց մեր երկրին խաղաղություն և մարդկանց հաճություն, ինչպես ավետեցին Աստուծո հրեշտակները, նաև իսկական կյանք, ինչպես ասում է Նա Ինքը՝ «Ես եկի, զի զկեանս ունիցիք»։

Թո՛ղ Ձեր և մեր բոլորիս մեջ ապրի ըստ մեր հավատի Նրա շնորհալի կյանքը և թո՛ղ Նա Իր ամենաբարձրյալ ուժով պահպանի և ամրապնդի նաև կյանքը բնական, և թո՛ղ դրան միանան այլ ամենայն բարիքներ և օգուտներ։

Խնդրելով Ձեր սուրբ աղոթքները, եղբայրական սիրով մնամ Ձերդ Վեհափառությանը նվիրված ի Քրիստոս,

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՌ ՊԱՏՐԻԱՐՔ՝
Ա Լ Ե Ք Ս Ի

## ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔԻՍԵԴԵԿ Գ-ԻՑ

**ԹԲԻԼԻՍԻԻՑ**

Ամենաողորմած Տերն արժանացրեց մեզ վերստին դիմավորելու Քրիստոսի Ծննդյան ամենաբերկրալի օրը: Քրիստոնյայի կրոնական հոգին կրկին լսում է հրեշտակի ավետումը հովիվներին՝ «Աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն: Զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է օծեալ Տէր, ի քաղաքի Դաւթի» (Ղուկ., Բ 10—11):

Շնորհավորում եմ Ձերդ Վեհափառությանը այդ մեծ բերկրության առթիվ, շնորհավորում եմ և ամանորի առթիվ: Ցանկանում եմ, որ Տերն առաջիկա նոր տարում ուրախացնի համայն աշխարհին՝ հաստատելով խաղաղություն ամբողջ աշխարհում, ամրապնդելով աշխարհի բոլոր ժողովուրդների խաղաղ բարեկամությունը և համագործակցությունը:

Սիրով ի Քրիստոս Հիսուս,

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ՝
**ՄԵԼՔԻՍԵԴԵԿ Գ**

---

## ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՋԵՈՖՖՐԻԻՑ

**ԼՈՆԴՈՆԻՑ**

Ձերդ Ս. Օծություն, սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս:

«Շնորհք և խաղաղութիւն եղիցին ընդ Ձեզ յԱստուծոյ Հօրէ մերմէ և ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ»: Ս. Հովհաննես ավետարանիչը (Ա, 14) իր վկայությունն է բերում մեզ, թե «Բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ»: Մինչ մենք դարձյալ լսում ենք այս բառերը Ծննդյան մեր ծիսակատարության մեջ, դրանք բարձրացնում են մեզ Աստուծո սիրո և զորության սքանչելի խորհրդի մեջ, հայտնված մարդացյալ Որդու գալստյամբ, որի մեջ նորոգված է մարդու կյանքը: Որովհետև երկնային կյանքը, որ իրավամբ պատկանում է Նրան որպես Աստուծո հավիտենական Որդի, լցնում է մարդկային բնությունը, որն Ինքը զգեցավ, սնուցեց նրան Իր վրա, որպեսզի բոլոր Իրեն եկողները կարենան ունենալ առատ կյանք և շնորհք:

Ամեն տարի մեր Փրկչի Ծննդյան տոնին մենք հոգով գնում ենք Բեթղեհեմ ոչ միայն հովիվների հետ, այլև ընկերակցությամբը ամեն երկրի և ամեն տարիքի եղբայր-քրիստոնյաների: Այնտեղ, երբ մենք երկրպագությամբ և հիացումով ծնրադրում ենք Որդու առջև, որ հանգչում է Իր օրհնյալ Մոր բազուկների մեջ, ճշմարտապես «Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ», որ խոնարհվեց փրկելու համար մեր անկյալ ցեղը, մենք գիտակցում ենք հոգով մեր միության և աղոթում ենք, որ Քրիստոս բուժի մեր բաժանումները և ավելացնի մեր խաղաղությունը:

Շնորհակալություն եմ հայտնում Աստծուն մեր եկեղեցիների միջև արդեն իսկ գոյություն ունեցող եղբայրության համար և մաղթում, որ մինչ մենք ստանում ենք Նրա բերած նոր կյանքը, միասին «Յաւիտեան ապրեսցուք մեք ի Նա և Նա ի մեզ»:

Հաճեցեք ընդունել, Ձերդ Ս. Օծություն, երջանիկ և օրհնյալ մի Ծննդի համար իմ եղբայրական ողջույնները Ձեզ և Ձեր ողջ հավատացյալ հոգևորականության և ժողովրդին:

Մնամ Ձեզ սիրող եղբայր ի Քրիստոս,

ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ
ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ՝
ՋԵՈՖՐԻ

---

## ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՍՏԻՆԻԱՆԻՑ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Անկեղծ սիրով մեր շնորհակալությունն ենք հայտնում Ձեր եղբայրական շնորհավորանքի առթիվ Քրիստոսի Ծննդյան տոնին և բոլոր սրտով մաղթում ենք Ձերդ Ս. Օծության, Հայ Եկեղեցու սպասավորներին և հավատացյալներին՝ առողջություն, խաղաղություն և արդյունավետ գործունեություն նոր՝ 1956 տարեշրջանի ընթացքում:

ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ՝
ՀՈՒՍՏԻՆԻԱՆ

---

## ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍԻՑ

ՌԻԳԱՅԻՑ

Նոր տարվա և Քրիստոսի Ծննդյան տոնի առթիվ աղոթքներով ու սրտագին շնորհավորում եմ ի Քրիստոս Հայոց Եկեղեցու Վեհափառ Ղեկավարին՝ իմ սիրեցյալ եղբայրակցին, Հայոց Եկեղեցու, որը սուրբգրական Արարատի հովանու ներքո պահպանում է սիրո և խաղաղության անփոփոխ քրիստոնեական սրբազան ավանդությունները:

Ողջունում եմ նաև Հայոց Եկեղեցու Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին: Ցանկանում եմ բոլորին՝ նոր տարվա աստվածային ողորմածություն, քաջառողջություն և երկար կյանք:

ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ՝
ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ

---

## ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱՆ ԿԻՅՎԻՏԻՑ

ՏԱԼԼԻՆԻՑ

Փառաբանելով Տիրոջը, ողջունում եմ Ձեզ և հանձին Ձեր՝ Հայոց եկեղեցուն Քրիստոսի Ծննդյան լուսապայծառ տոնի առիթով։ Ի սրտե ցանկանում եմ Տիրոջ ողորմածությունը և առաջադիմություն Ձեր սուրբ գործերում առաջիկա նոր տարվա առիթով։

ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ՝
ՅԱՆ ԿԻՅՎԻՏ

---

## ՄԻՆՍԿԻ ԵՎ ԲԵԼՈՌՈՒՍԻԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՊԻՏԻՐԻՄԻՑ

ՄԻՆՍԿԻՑ

Շնորհավորում եմ Ձեզ Քրիստոսի Ծննդյան տոնի և առաջիկա նոր տարվա առիթով։ Ողջունում եմ Ձերդ Ս. Օծությանը լավագույն ցանկություններով հանդերձ։

Անկեղծ սիրով՝
ՄԻՆՍԿԻ ԵՎ ԲԵԼՈՌՈՒՍԻԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ՝
ՊԻՏԻՐԻՄ

---

## ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՆՏԻՄ ՆԻԳԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՑ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Ս. Ծննդյան տոնի առիթով Ձեզ ընտանի հայրենի մեր ափերից հղում ենք ջերմ սիրո ողջույններ և առողջության ու արդյունավետ հովվապետության բարեմաղթություններ։

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ՝
ԱՆՏԻՄ ՆԻԳԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ

---

## ՄՈՍԿՎԱՅԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՌՈՒԺԻՑԿՈՒՑ ԵՎ ՏԵՍՈՒՉ ՊՐՈՖԵՍՈՐ ԴՈԿՏՈՒՍՈՎԻՑ

ԶԱԳՈՐՍԿԻՑ

Նոր տարվա և առաջիկա մեծ տոների առիթով, Մոսկվայի Հոգևոր Ճեմարանը հանձին Ձերդ Վեհափառության սրտագին շնորհավորում է հնագույն Հայկական եկեղեցին և ամբողջ միաբանությանը։

**Մոսկվայի Հոգևոր Ճեմարանի**
**Ռեկտոր՝ ավագ քահանա** ՌՈՒԺԻՑԿԻՅ
**Տեսուչ՝ պրոֆեսոր** ԴՈԿՏՈՒՍՈՎ